ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Դրամաշնորհային ծրագիր «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» (ՏՏԵԶԾ) նախապատրաստման նպատակով

Դրամաշնորհ No. TF0A1063

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ Ծրագրի ղեկավար

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ PLEID C- 1.3

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային Բանկից ֆինանսավորում է ստացել՝ **«Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» (ՏՏԵԶԾ) նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի** (Դրամաշնորհ No. TF0A1063) ֆինանսավորման նպատակով, և վերջինս մտադիր է այդ գումարի մի մասը ծախսել սույն հայտարարությունում նկարագրված խորհրդատվական և այլ ծառայությունների գնման համար:

Ծրագրի ղեկավարը (ԾՂ) պատասխանատու է ՏՏԵԶ դրամաշնորհային ծրագրի միջոցառումների նախապատրաստման շրջանակներում ՀԶՀ Զբոսաշրջության Հայաստանի բաժնի ամենօրյա աշխատանքի տեխնիկական համակարգման համար, որը կարող է ներառել աշխատակազմի վերապատրաստման կարիքների սահմանումը, վերապատրաստման ծրագրի մշակումը և իրականացումը, ինչպես նաև կարողությունների զարգացումը՝ ՀԶՀ-ի՝ Հայաստանում զբոսաշրջության բաժնում վերապատրաստումը, տեխնիկա-տնտեսական իրագործելիության ուսումնասիրությունների և ճարտարապետական-ինժեներական մանրամասն նախագծերի իրականացման և որակի վերահսկողությունը՝ ՀԶՀ-ի գործադիր տնօրենի ընդհանուր ուղղորդման և վերահսկողության ներքո:

Ուստի Հայաստանի Զարգացման Հիմնադրամը (ՀԶՀ) և ՀՀ ֆինանսների նախարարության “Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս համապատասխան որակավորում ունեն վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Հանձնարարականն իրականացնելու համար անհատ խորհրդատուին կտրամադրվի մոտավորապես 4 ամիս:

Որակավորման պահանջներ

Առաջադրանքի իրականացման համար կվարձվի անհատ խորհրդատու, որն ունի առնվազն հետևյալ որակավորումները և փորձը.

- Նվազագույն կրթություն՝ տնտեսագիտության, կառավարման, բիզնեսի կառավարման և հարակից ոլորտների դիպլոմ, մագիստրոսի աստիճանը ողջունելի է:
- Աշխատանքային փորձ (նախընտրելի է 5-8 տարվա):
- Դոնորների ֆինանսավորմամբ ենթակառուցվածքային ծրագրերում աշխատելու փորձ (առնվազն 5 տարվա):
- Առաջատար միջազգային դոնորների հետ աշխատելու փորձ (առնվազն 5 տարվա):
- Ղեկավար պաշտոնում աշխատելու փորձ (առնվազն 5 տարվա):
- Տեխնիկական կրթության ուժեղ բազա՝ զբոսաշրջության ենթակառուցվածքի ծրագրային ոլորտի ընկալումով և/կամ իրական փորձով:
- Խնդիրները լուծելու և որպես թիմի ուժեղ խաղացող հանդես գալու կարողություններ:

<u>Պահանջվող համակարգչային ծրագրեր, օպերացիոն համակարգեր (գիտելիքների մակարդակ)</u>

- Microsoft Office - լավ

<u>Լեզուներ</u>

- հայերեն (մայրենի)
- անգլերեն (բանավոր և գրավոր հաղորդակցություն)

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի «Ուղեցույցի՝ ՎՀՄԲ փոխառությունների եւ ՄՀԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» (2011 թ-ի հունվար, վերախմբագրված 2014 թ-ի հուլիս) պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2011 թ-ի հունվարին, վերախմբագրված 2014 թ-ի հուլիսին ՀԲ Ուղեցույցների՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն եւ վարձում, շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. ապրիլի 20 -ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am